**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**
**ПРОТОКОЛ № 2**

**ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**
ЗАСЕДАНИЯ КОМИССИИ ПО ОЦЕНКЕ ПРОЦЕДУРЫ ЗАКУПКИ ПО КОДУ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80**

Քաղ. Երևան
Гор. Ереван

9 դեկտեմբերի 2020թ.
9 декабря 2020г.

2020թ-ի նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 9-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

С 25 ноября по 9 декабря 2020 года, в офисе ЗАО "Ереванский Теплоэлектроцентр", г. Ереван, ул. Арин-Берда 3-й переулок, N 3, состоялся заседание комиссии по оценке процедуры закупки (далее-комиссия) по коду **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80.** В заседании комиссии приняли участие следующие члены комиссии՝

| | |
|---|---|
| Ա. Սերոբյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ. |
| А. Серобян | Начальник финансово - экономического отдела ЗАО "Ереванский Теплоэлектроцентр" |
| Վ. Հովհաննիսյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ |
| В.Ованнисян | ведущий специалист финансово- экономического отдела ЗАО "Ереванский Теплоэлектроцентр" |
| Ս. Խաչատրյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ |
| С. Хачатрян | ведущий специалист финансово- экономического отдела ЗАО "Ереванский Теплоэлектроцентр" |
| Լ. Օհանյան | «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ |
| Л. Оганян | Старший бухгалтер бухгалтерской службы ЗАО "Ереванский Теплоэлектроцентр" |

Ա. Պետրոսյան

Ա. Петросян

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ.
Ведущий специалист по закупкам отдела снабжения и закупок ЗАО "Ереванский Теплоэлектроцентр"

Ի. Նավասարդյան

И. Навасардян

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.
Начальник юридическо-договорного отдела ЗАО» Ереванский Теплоэлектроцентр".

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:
Учитывая, что состав комиссии состоит из шести членов, а в заседании комиссии участвовали все члены комиссии, следовательно, согласно подпункту 2 пункта 26 Порядка, утвержденного пунктом 1 решения Правительства Республики Армения N 526-Н от 04 мая 2017 года, заседание комиссии было признано правомочным и было объявлено открытым:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Անի Սերոբյանը, իսկ քարտուղարն էր՝ Արմինե Ավետիսյանը:
Председателем комиссии был А. Серобян, а секретарем была А. Аветисян

**ՕՐԱԿԱՐԳ**

**Повестка дня**

1. **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
1. **О лицах подавших заявку на процедуру закупа по коду ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80**, о оценке их заявок и о предложенных ценах.
2. Ընտրված /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
2. Определение избранного участника и места последующих участников.
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:
3. Об утверждении текста заявления о заключении договора.

## 1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. О лицах подавших заявку на процедуру закупа по коду ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80**, о оценке их заявок и о предложенных ценах.

Հանձնաժողովի նախագահ Ա. Սերոբյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը:

Председатель комиссии А. Серобян объявил заседание открытым и обнародовал цены на услуги, которые будут закуплены в рамках данной процедуры:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | 2020թ. ավարտվող տարվա աուդիտի ծառայություն | 9096000 |

| Н/П | Наименование предмета закупки | Общая цена, установленная заявкой на покупку |
|---|---|---|
| 1. | Услуги аудита заканчивающегося 2020 года | 9096000 |

**ԵԶԷԿ-ԳՀԾՁԲ-20/80** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի նոյեմբերի 25-ին, ժամը «17:00»-ին: ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Заявки на процедуру запроса на покупку с кодом **ԵԶԷԿ-ԳՀԾՁԲ-20/80** открыты через сайт www.armeps.am в день и время, установленным приглашением, 25/11/2020года в 17:00 часов. Обоснования предусмотренные 25 подпунктом 32 пункта Порядка утвержденным решением Правительства РА N 526-Н 1-ого июля 2017-ого года не получены.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Запросы и ответы по заявкам не зарегистрированы.

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Изменений в приглашении не произошло, других запросов и ответов не было.

ԵԶԷԿ-ԳՀԾՁԲ-20/80 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցը/ները//.

заявку на участие в процедуре запроса котировок по коду ԵԶԷԿ-ԳՀԾՁԲ-20/80 подали следующее лица /далее также участник/

| Հ/Հ П/Н | Մասնակցի անվանում/Название участника | Հասցեներ/Адрес | Էլ. փոստ/ Эл. почта |
|---|---|---|---|
| 1 | Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ և Գրանթ Թորնթոն ՓԲԸ/ООО Гранд Торнтон Аудит и Грант Торнтон | Ք.Երևան, Ս. Գրիգոր Լուսավորչի փ., 9 շ./г. Ереван, ул Григора Лусажорича 9 | gta@am.gt.com |
| 2 | Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ/ООО БИ-ДИ-О Армения | Ք. Երևան, Դ. Անհաղթ փ., 23/6, 5-րդ հարկ/ г. Ереван,Д. Анахта 23/6 5 этаж | bdo@bdoarmenia.am |
| 3 | Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ/ ЭЙ-ЭН Аудит | Ք. Երևան, Գյուլբեկյան30/3 129/ г. Ереван, Гюлбекян 30/3 129 | office@anaudit.am |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝/ Комиссия констатировала, что:

- Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ԵԶԷԿ-ԳՀԾՁԲ-20/80 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան. ,

- Участники заявки составили в соответсвии с приглашением процеудры закупа под кодом ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-20/80
- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.
- В заявках, поданной участниками, имеются все необходимые по приглашению документы.,
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ի և Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ-ի և էյ-էն Աուդիտ ՓԲԸ-ի:

Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ի և Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես Հրավերի 1-ին մասի 4.3-րդ կետի 5-րդ ենթակետի վերջին պարբերությամբ սահմանված է.

*«եթե համատեղ գործունեության պայմանագրով սահմանված է, որ մասնակիցների ընդհանուր գործերը վարում է համատեղ գործունեության պայմանագրի առանձին մասնակից, ապա հայտը ներկայացվում, իսկ պայմանագիր կնքվելու դեպքում վճարումները կատարվում են այդ մասնակցին».*

Տվյալ պարագայում մասնակցի հայտով ներկայացված համատեղ գործունեության պայմանագրի 5.5-րդ կետը սահմանում է, որ երկրորդային գործընկերը լիազորում է առաջնային գործընկերոջը իր անունից ստորագրել հանձնարարության հետ կապված բոլոր փաստաթղթերը, ինչը ենթադրում է, որ ընդհանուր գործերը վարելու իրավասությունը պայմանագրով տրվել է առաջնային գործընկերոջը, այնինչ հայտը ներկայացվել է երկրորդ գործընկերոջ՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից: Ուստի, անհրաժեշտ է շտկել ներկայացված պայմանագրի 1.2-րդ և 5.5-րդ կետերը:

էյ-էն Աուդիտ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես ընթացակարգի հրավերով սահմանված է՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված «Էներգետիկական ոլորտի առողջացման ծրագիր» 8615-AM Վարկային համաձայնագրի Ցանկ 2, Բաժին III, կետ B.ii-ի աուդիտը պետք է իրականացվի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից ընդունելի աուդիտորի կողմից՝ այն է, այն աուդիտորի կողմից, որը ընդգրկված է Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի Իրավասու աուդիտորական կազմակերպությունների ցանկում, մինչդեռ էյ- էն Աուդիտ ՓԲԸ-ն ընդգրկված չէ վերոնշյալ ցանկում:

. В заявках, поданной ООО Гранд Торнтон Аудит и Грант Торнтон и ЭЙ-ЭН Аудит не соответствует с приглашением.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Председатель комиссии объявил ценовые предложение написанные буквами представленные заявками участников.

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

Информация о ценовых предложениях, представленных участниками, и о местах, занятых участниками, включены в нижеследующую таблицу (далее-таблица):

| Չափաբաժնի համարը/ Номер лота | Մասնակցի/Участник | | Մասնակիցների առաջարկած գները՝ Ценовые предложения участников | |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ/ Занимаемое место | Անվանում/ Название | Արժեք/ Стоимость | Ընդհանուր գին/ Общая стоимость |
| 1 | 1 | Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ և Գրանթ Թորնթոն ՓԲԸ | 6250000 | 7500000 |
| | 2 | Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ | 6960000 | 8352000 |
| | - | Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ | 7900000 | 9480000 |

Որոշվեց՝/Решили

1. Անի Սերոբյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

1. Представленную А. Серобяном информацию принять к сведению.

2. Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

2. Заявка представленные БИ-ДИ-О Армения оценить удовлетворительно

3. ԷՅ-ԷՆ Աուդիտ ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

3 Заявка представленные ЭЙ-ЭН Аудит оценить неудовлетворительно и отказать.

4. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

Приостановить заседание на один рабочий день.

5. Արմինե Ավետիսյանին՝ ծանուցել Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ-ին և Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Армине Аветисяну: уведомить ООО Гранд Торнтон Аудит и Грант Торнтон исправить зафиксированное несоответствие в течение 1 рабочего дня.

Կողմ՝/За 6
Դեմ՝/Против 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝/ Комиссия констатировала, что:

- Գրանթ Թորնթոն Աուդիտ ՍՊԸ-ն և Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները:
- ООО Гранд Торнтон Аудит и Грант Торнтон в установленный срок исправили несоответствие.

## 2.ԸՆՏՐՎԱԾ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ОБ ОПРЕДЕЛЕНИИ ВЫБРАННЫХ /И ЗАНИМАВШИХ ПОСЛЕДОВАТЕЛЬНЫЕ МЕСТА/ УЧАСТНИКОВ

Որոշվեց՝/Решили.

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:
1. По каждому лоту процедуры объявить выбранных и последующих мест занявших участников в соответствии с таблицей.

Կողմ՝/За 6
Դեմ՝/Против 0

## 3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ОБ УТВЕРЖДЕНИИ ТЕКСТА ЗАЯВЛЕНИЯ О ЗАКЛЮЧЕНИИ ДОГОВОРА

Հանձնաժողովի քարտուղար Արմինե Ավետիսյանը ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:
Секретарь комиссии А. Аветисян представила проект текста заявления о заключении договора:

Որոշվեց՝/Решили.

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
Утвердить текст заявления о заключении контракта согласно приложению.

Կողմ՝/За 6
Դեմ՝/Против 0

Հանձնաժողովի նախագահ՝
Председатель комиссии.
Ա. Սերոբյան
А. Серобян

Հանձնաժողովի անդամներ
члены комиссии

Վ. Հովհաննիսյան
В.Ованнисян

Ս. Խաչատրյան
С. Хачатрян

Լ. Օհանյան
Л. Оганян

Ա. Պետրոսյան
А. Петросян

Ի. Նավասարդյան
И. Навасардян

Հանձնաժողովի քարտուղար՝
секретарь комиссии

Ա. Ավետիսյան
А. Аветисян